ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ԳՀԾՁԲ-22-4/2-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 15.03.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Լավ Ընկեր» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Վ. Համբարձումյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 12.11.2021թ. կնքված №ԳՀԾՁԲ-22-4/2-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Պատվիրատուին մատուցել Պայմանագրի № 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար: Մատուցվող ծառայությունների և պահեստամասերի միավորի գները սահմանված են Պայմանագրով:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության առավելագույն գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված № 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայության գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետով և սույն համաձայնագրի № 2 Հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով և ժամկետներում:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը):

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Լավ Ընկեր» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Կապան, Շահումյան 19/40
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Այ Դի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 11817000131700
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 09414681
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N 1
№ԳՀԾՁԲ-22-4/2-4 գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Անվանումները	Չ/Մ	Քանակը	Առավելագույն գումարը	Ծառայությունների մատուցումը 2022թ. ըստ եռամսյակների
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ (ԿրԱՋ ավտոմեքենայի իր մոդիֆիկացիաներով)	դրամ	1	30000000	Ծառայությունների մատուցումը 2022թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում, բայց ոչ ուշ քան 10.12.2022թ. Ըստ ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության հայտերի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Լավ Ընկեր» ՍՊԸ
Տնօրեն

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N2
№ԳՀՇՁԲ-22-4/2-4 գնման պայմանագրի N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

			Ծառայության			
			Դիմաց վճարումը 2022թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 26.12.2022թ, ընդ որում՝			
Հ/հ	Անվանումը	CPV կոդը	1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Բեռնատարերի վերանորոգման ծառայություններ	50111220/520	5000000	12000000	20000000	30000000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Լավ Ընկեր» ՍՊԸ
Տնօրեն

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ